սույն փաստաթուղթը հանդիսանում է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ սեփականությունը,
բաղկացած է 11 (տասնմեկ) էջից

Հաստատված է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
միակ բաժնետիրոջ 30 հոկտեմբեր 2023 թվականին
կայացված թիվ 231030 որոշմամբ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

2. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ 3

3. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 4

4. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ), ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

5. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 6

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ 6

8. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 8

9. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ 9

10. ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ 10

11. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 10

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգով (այսուհետ՝ նաև «Կանոնակարգ») սահմանվում է վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) գործառույթներն ու լիազորությունները, ինչպես նաև նրա աշխատանքի կազմակերպման և կառավարման մարմինների հետ փոխգործակցության կարգը:

1.2. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ընկերության գործունեության ներքին վերահսկողության մշտապես գործող մարմին է, որն իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև ստուգում է ընկերության կառավարման մարմինների որոշումների և ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին ու Ընկերության կանոնադրությանը:

1.3. Իր գործունեության ընթացքում վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) անկախ է ընկերության գործունեության կառավարումն իրականացնող մարմիններից: Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) առաջնորդվում է գործող օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգով:

2. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (այսուհետ՝ «Ժողով») 3 տարի ժամկետով:

2.2. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է Ժողովին:

2.3. Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Ընկերության կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել:

2.4. Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

2.5. Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցերի քվեարկությանը չեն մասնակցում Ընկերության տնօրենների խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») անդամներին, ինչպես նաև տնօրենին (գլխավոր տնօրենին), վարչության ու տնօրինության անդամներին պատկանող բաժնետոմսերը, եթե Ընկերությունը ունի 50 (հիսուն) և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր):

2.6. Վերստուգող հանձնաժողովի յուրաքանչյուր նորընտիր կազմի առաջին նիստում ընտրվում են հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

2.7. Վերստուգող հանձնաժողովի նախագահը և քարտուղարն ընտրվում են վերստուգող հանձնաժողովի կազմից, հանձնաժողովի անդամների կողմից, հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետով՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

2.8. Վերստուգող հանձնաժողովի անդամի (վերստուգողի) պաշտոնավարման ընթացքում վերստուգող հանձնաժողովի անդամին (վերստուգողին) ներկայացվող պահանջների (այդպիսիք սահմանված լինելու դեպքում) խախտման, նոր հանգամանքներ ի հայտ գալու, կամ սեփական դիմումի ներկայացման հիմքերով հետագա պաշտոնավարման

անհնարինության դեպքում վերստուգող հանձնաժողովը (վերստուգողի դեպքում՝ ընկերության գործադիր մարմնի ղեկավարը) դրա մասին եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է Խորհրդին՝ վերստուգող հանձնաժողովի անդամի (վերստուգողի) թափուր մնացած տեղը լրացնելու կամ հանձնաժողովի անդամին (վերստուգողին) փոխարինելու օրակարգով Ժողով գումարելու առաջարկությամբ:

3. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1. Վերստուգող հանձնաժողովի նախագահը՝

ա) հրավիրում և անցկացնում է հանձնաժողովի նիստերը,

բ) հաստատում է վերստուգող հանձնաժողովի նիստերի օրակարգը, ինչպես նաև լուծում է հանձնաժողովի նիստերի նախապատրաստման և անցկացման հետ կապված բոլոր հարցերը,

գ) կազմակերպում է վերստուգող հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը,

դ) բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում և խորհրդի նիստերում ներկայացնում է վերստուգող հանձնաժողովը,

ե) ստորագրում է վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և վերստուգող հանձնաժողովի անունից ելքագրվող այլ փաստաթղթեր,

զ) իրականացնում է Կանոնակարգով, Ընկերության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված՝ վերստուգող հանձնաժողովի անդամի գործառույթները:

3.2. Վերստուգող հանձնաժողովի նիստերին նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր առանձին դեպքի համար վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ ընտրված այլ անդամ:

3.3. Վերստուգող հանձնաժողովի քարտուղարը՝

ա) կազմում է վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

բ) ստորագրում է վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները

գ) վերստուգող հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընկերության կառավարման մարմիններին տեղեկացնում է անցկացված ստուգումների արդյունքների մասին, ինչպես նաև տրամադրում է վերստուգող հանձնաժողովի ստուգումների արդյունքների մասին տեղեկանքների պատճենները,

դ) ձևակերպում է ստուգումների տեղեկանքները և վերստուգող հանձնաժողովների եզրակացությունները,

ե) կազմակերպում է վերստուգող հանձնաժողովի գործավարությունը, փաստաթղթաշրջանառությունը, ինչպես նաև փաստաթղթերի պահպանումը,

զ) վերստուգող հանձնաժողովի անդամներին ծանուցում է հանձնաժողովի նիստերի, ընկերության գործունեության ծրագրային և արտածրագրային ստուգումների անցկացման մասին,

է) իրականացնում է Կանոնակարգով, Ընկերության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված վերստուգող հանձնաժողովի անդամի գործառույթները:

4. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ), ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է՝

ա) պահանջել գումարել բաժնետերերի արտահերթ ժողով, եթե առկա է ընկերության բաժնետերերի շահերին սպառնացող իրական վտանգ,

բ) Ժողովին ներկայացնել տեղեկանք՝ ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգումների արդյունքների, ինչպես նաև խորհրդի անդամների ու կառավարման համակարգի այլ անդամների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին փաստաթղթերի պահանջների հայտնաբերված խախտումների մասին (դրանց հայտնաբերումից հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում),

գ) ընկերության տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման մասին եզրակացությունը,

4.2. Վերստուգող հանձնաժողովի անդամները պարտավոր են՝

ա) մասնակցել հանձնաժողովի նիստերին,

բ) կատարել հանձնաժողովի որոշումները,

գ) մասնակցել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներին,

դ) խախտումների հայտնաբերման դեպքում վերստուգող հանձնաժողովի նախագահին տեղեկացնել (գրավոր կամ բանավոր) խախտումների բնույթի և դրանք թույլ տված անձանց մասին,

ե) չհրապարակել ստուգման ընթացքում իրենց հայտնի դարձած՝ Ընկերության գործառնությունների, գործունեությանը վերաբերող ցանկացած ծրագրի կամ գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և դրա մասին ցանկացած այլ տեղեկատվություն, որը Ընկերությունը մտադիր է եղել գաղտնի պահել, և ստուգողը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության մասին, ինչպես նաև առևտրային գաղտնիք համարվող, գաղտնի փաստաթղթերում պարունակվող տեղեկություններ:

5. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի՝

ա) ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունն ստուգելու սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով

բ) ընկերության կառավարման մարմինների անդամներից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և աշխատողներից պահանջելու պարզաբանումներ ստուգումների ժամանակ առաջացած հարցերի վերաբերյալ,

գ) բացահայտված խախտումների վերացման ուղղությամբ անհետաձգելի միջոցների ձեռնարկման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու ընկերության կառավարման մարմիններին:

դ) պահանջելու Ժողովի և Խորհրդի նիստերի գումարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Ընկերության կանոնադրությանը և Կանոնակարգին համապատասխան,

ե) ընկերության կառավարման մարմիններից, ինչպես նաև ստորաբաժանումների ղեկավարներից պահանջելու և ստանալու վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կողմից Ընկերության, նրա առանձնացված ստորաբաժանումների ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերն ու համապատասխան նյութերը,

զ) ծանոթանալու Ընկերության գաղտնի փաստաթղթերին, կոլեգիալ գործադիր մարմնի նիստերի արձանագրություններին և/կամ միանձնյա գործադիր մարմնի հրամաններին, արտաքին աուդիտի արդյունքներին (եզրակացությանը) և աուդիտն իրականացրած անձի կարծիքին:

է) Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջած փաստաթղթերը պետք է տրամադրվեն դրանց պահանջից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6.1. Իր աշխատանքը Վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը) կազմակերպում է հանձնաժողովի անկախության, որոշումների ընդունման կոլեգիալության, անդամների մասնագիտական պատրաստվածության և պատասխանատվության սկզբունքների հիման վրա:

6.2. Սույն Կանոնակարգի իմաստով Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) անկախությունը հանձնաժողովի անդամների անկախ լինելն է Ընկերության գործադիր մարմնի և Խորհրդի անդամներից:

6.3. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իր գործունեությունն իրականացնում է ծրագրային ստուգումների, ինչպես նաև արտածրագրային ստուգումների անցկացման եղանակով:

6.4. Նորընտիր վերստուգող հանձնաժողովի աշխատանքային ծրագիրը հաստատվում է վերստուգող հանձնաժողովի առաջին՝ կազմակերպական նիստում, որը պետք է գումարվի ոչ ուշ, քան վերստուգող հանձնաժողովի նոր կազմի ձևավորումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

6.5. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) աշխատանքային ծրագիրը ներառում է՝

ա) ծրագրային ստուգումների օբյեկտները (ֆինանսական և տնտեսական գործունեության տեսակները),

բ) ծրագրային ստուգումների ժամկետային ժամանակացույցը, ստուգումների անցկացման ժամկետները,

գ) ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստերի գումարման և ստուգումների անցկացման կազմակերպման հետ կապված այլ հարցեր:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

7.1. Ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստերը գումարվում են վերստուգող հանձնաժողովի աշխատանքային ծրագրով նախատեսված ժամկետներում, ինչպես նաև ծրագրային կամ արտածրագրային ստուգում անցկացնելուց առաջ և դրա անցկացման արդյունքներով, բայց ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ:

7.2. Յուրաքանչյուր ստուգումից առաջ ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստում քննարկվում են առաջիկա ստուգման նախապատրաստման և անցկացման հետ կապված հետևյալ խնդիրները՝

ա) ստուգման օբյեկտի որոշում (հաշվապահական և վիճակագրական հաշվետվություն և այլն),

բ) ստուգումն անցկացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի ցանկը, դրանք ստանալու միջոցներն ու աղբյուրները,

գ) այն անձանց ցանկը, որոնց անհրաժեշտ է ներգրավել ստուգումն անցկացնելու համար (բացատրություններ տալու, առանձին հարցեր պարզաբանելու համար),

դ) ստուգման արդյունքների ամփոփման համար վերստուգող հանձնաժողովի նիստի անցկացման ժամկետի որոշում,

ե) ստուգման արդյունքների ամփոփման վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի նիստին վերստուգող հանձնաժողովի ստուգման արդյունքների մասին տեղեկանքի

նախագծի նախապատրաստման համար պատասխանատու վերստուգող հանձնաժողովի անդամի որոշում,

զ) այլ հարցեր:

7.3. Յուրաքանչյուր ստուգման արդյունքներով անցկացվող ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստում քննարկվում են հետևյալ հարցերը՝

ա) ստուգման անցկացման ընթացքում ստացված տեղեկատվության և դրա ստացման աղբյուրների քննարկում,

բ) ստուգման արդյունքների ամփոփում,

գ) ստուգման արդյունքների հիման վրա առաջարկությունների ձևավորում,

դ) ստուգման արդյունքների հիման վրա վերստուգող հանձնաժողովի տեղեկանքի հաստատում և ստորագրում,

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Ընկերության կանոնադրության խախտման պատճառների հայտնաբերում և վերլուծություն, դրանց կանխարգելման և վերացման հնարավոր տարբերակների քննարկում,

զ) ստուգմամբ հայտնաբերված խախտումների վերացման անհրաժեշտության, խախտումներ թույլ տված անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ Ընկերության կառավարման մարմիններին դիմելու մասին որոշման ընդունում,

է) ստուգման արդյունքների ամփոփման հետ կապված այլ հարցեր:

7.4. Ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստը հրավիրում է վերստուգող հանձնաժողովի նախագահը՝ սեփական կամ վերստուգող հանձնաժողովի անդամի նախաձեռնությամբ, ինչպես նաև բաժնետերերի ընդհանուր ժողովի, ընկերության խորհրդի որոշմամբ, ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

7.5. Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահը վերստուգող հանձնաժողովի նիստի նախապատրաստման ընթացքում՝

ա) որոշում է նիստի անցկացման ամսաթիվը, ժամը և վայրը,

բ) նախապատրաստում է նիստի օրակարգի նախագիծը,

գ) կազմում է նիստի օրակարգի հարցերի քննարկման համար անհրաժեշտ նյութերի և փաստաթղթերի (տեղեկատվության) ցանկը,

դ) որոշում է նիստին հրավիրվող անձանց ցանկը,

ե) որոշում է նիստի անցկացման նախապատրաստման հետ կապված այլ հարցեր:

7.6. Վերստուգող հանձնաժողովի անդամները նիստի անցկացման մասին տեղեկացվում են (գրավոր կամ բանավոր) ոչ ուշ, քան նիստի անցկացումից 3 աշխատանքային օր առաջ:

7.7. Ընկերության գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ընկերության կանոնադրության և այլ ներքին փաստաթղթերի պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում վերստուգող հանձնաժողովի նախագահը պարտավոր է գումարել վերստուգող հանձնաժողովի նիստ՝ արտաժրագրային ստուգում անցկացնելու հարցը քննարկելու համար:

7.8. Վերստուգող հանձնաժողովի անդամը, սույն կանոնակարգի 7.7-րդ կետում նշված խախտումների հայտնաբերման դեպքում, պարտավոր է վերստուգող հանձնաժողովի նախագահին հայտնել (գրավոր կամ բանավոր) խախտումների բնույթի և դրանք թույլ տված անձանց մասին, ոչ ուշ, քան դրանց հայտնաբերման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

7.9. Սույն կանոնակարգի 7.7-րդ և 7.8-րդ կետերով նախատեսված դեպքերում վերստուգող հանձնաժողովի նախագահը պարտավոր է գումարել վերստուգող հանձնաժողովի նիստ՝

հայտնաբերված խախտումների մասին տեղեկատվություն ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

7.10. Վերստուգող հանձնաժողովի նիստը իրավազոր է (ունի քվորում), եթե դրան մասնակցում է ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Քվորումի բացակայության դեպքում վերստուգող հանձնաժողովի նիստը հետաձգվում է, բայց ոչ ավելի, քան 5 աշխատանքային օրով:

7.11. Վերստուգող հանձնաժողովի նիստի օրակարգի հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Վերստուգող հանձնաժողովի նիստում հարցերի լուծման ժամանակ վերստուգող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում վերստուգող հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

7.12. Վերստուգող հանձնաժողովի նիստում վերստուգող հանձնաժողովի քարտուղարը վարում է արձանագրություն:

7.13. Ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պետք է նշվեն՝

ա) նիստի անցկացման ամսաթիվը և վայրը,

բ) վերստուգող հանձնաժողովի անդամների և նիստին ներկա (հրավիրված) անձանց ցանկը,

գ) նիստի քվորումի մասին տեղեկատվություն,

դ) նիստի օրակարգում ընդգրկված հարցերը,

զ) քվեարկության արդյունքները,

է) վերստուգող հանձնաժողովի ընդունած որոշումները:

7.14. Ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմվում է առնվազն 2 օրինակից, նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում և ստորագրվում է Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

7.15. Ընկերությունը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում պահպանել վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ներքին փաստաթղթերը, ստուգման մասին տեղեկանքները, եզրակացությունները, աշխատանքային ծրագրերը, վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

8. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

8.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային ստուգումներ իրականացնելիս՝ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ղեկավարվում է աշխատանքի հաստատված ծրագրով:

8.2. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արտածրագրային ստուգումներ իրականացնելիս վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հիմք է ընդունում ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) որոշումը, Ժողովի և Խորհրդի որոշումները, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը:

8.3. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) արտածրագրային ստուգումների արդյունքներն այդ ստուգումների իրականացման նախաձեռնողին է ներկայացնում ստուգումների ավարտից ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում:

8.4. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման աշխատանքների կազմակերպումը ներառում է՝

ա) նորմատիվ-իրավական բազայի որոշումը, որով կարգավորվում է ընկերության ստուգվող հատվածի (ոլորտի) գործունեությունը,

բ) ընկերության ֆինանսական և տնտեսական փաստաթղթերի, ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների ցուցանիշների, այլ փաստաթղթերի հավաքագրումը և վերլուծությունը, ստուգվող օբյեկտին վերաբերող գրավոր ու բանավոր պարզաբանումների ստացումը,

գ) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հետ ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության անհամապատասխանության հատկանիշների, ֆինանսական, վիճակագրական և այլ տիպի հաշվետվություններում ու փաստաթղթերում ընկերության գործունեության խեղաթյուրված և անարժանահավատ արտացոլման հայտնաբերումը,

դ) Կանոնակարգով ամրագրված՝ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունների սահմաններում ընկերության ֆինանսատնտեսական գործունեության համալիր ստուգումն ապահովող այլ գործողությունների կատարումը:

8.5. Ստուգման անցկացման ժամանակ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ընկերության կառավարման մարմիններից, առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներից և այլ անձանցից պահանջում է անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր: Պահանջվող փաստաթղթերը և նյութերն ընկերության վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին) պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի ծանոթանալու համապատասխան ստուգման օբյեկտին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերին և նյութերին:

9. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման ընթացքում վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) ստուգում է՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը,

բ) Ժողովի որոշումների կատարումը,

գ) Գործադիր մարմնի, Խորհրդի որոշումների և Ընկերության Կանոնադրության պահանջների կատարումը,

դ) ընկերության գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ընկերության կանոնադրությանը և ներքին փաստաթղթերին,

ե) հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման համապատասխանությունը հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին,

զ) ակտիվների և պարտավորությունների գույքագրման արժանահավատությունը,

է) հաստատված նախահաշիվներով դրամական միջոցների ծախսման համապատասխանությունը,

ը) հիմնադրամների կազմավորումը և դրանց նպատակային օգտագործումը,

թ) այլ օբյեկտներ:

10. ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

10.1. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) յուրաքանչյուր ստուգման արդյունքների հիման վրա կազմում է ստուգման մասին տեղեկանք, որը պետք է բովանդակի՝
ա) տեղեկանքի կազմման օրը և վայրը,
բ) ստուգման անցկացման ժամկետները և ձևը,
գ) ստուգման հիմքը,
դ) ստուգման նպատակը և օբյեկտը,
ե) հայտնաբերված խախտումները,
է) հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ առաջարկությունները:

10.2. Ստուգման մասին տեղեկանքն ստորագրում են վերստուգող հանձնաժողովի նախագահը և ստուգումն իրականացրած անդամները (կամ վերստուգողը):

11. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պետք է բաղկացած լինի 3 մասից՝ ներածական, վերլուծական և եզրափակիչ:

11.2. Եզրակացության ներածական մասը պետք է բովանդակի՝
ա) փաստաթղթի լրիվ անվանումը,
բ) եզրակացության կազմման օրը և վայրը,
գ) ստուգումների հիմքերը (վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) նախաձեռնությամբ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով,
դ) ստուգման նպատակը (ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության հաստատումը, կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին և այլն),
զ) ստուգման օբյեկտները (Ընկերության որոշակի գործունեությունը, ֆինանսական և տնտեսական փաստաթղթերը՝ ներառյալ ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունը և այլն),

11.3. Վերլուծական մասը պետք է բովանդակի ընկերության ֆինանսատնտեսական վիճակի օբյեկտիվ գնահատականը և ներառի՝
ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը, այդ թվում՝
հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների, ֆինանսատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի ստուգումների ամփոփ արդյունքները,
ֆինանսատնտեսական գործարքների իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման ստուգման ընդհանուր արդյունքները,
բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը,

11.4. Եզրակացության եզրափակիչ մասը վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստարկված կարծիքն է և պետք է բովանդակի՝

ա) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության հաստատումը,

բ) տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվության ներկայացման կարգի, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի խախտման փաստերի մասին,

գ) առաջարկություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ընկերության կանոնադրության և ներքին փաստաթղթերի պահանջների խախտումների պատճառների ու հետևանքների վերացման վերաբերյալ:

11.5. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունն ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների (վերստուգողի) կողմից: Նշված եզրակացությունը ոչ ուշ, քան բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարումից 21 օր առաջ տրամադրվում է Խորհրդին և/կամ Ժողովին:

11.6. Ընկերությունը պարտավոր է պահպանել վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը և ապահովել դրան ծանոթանալու՝ բաժնետերերի՝ օրենքով սահմանված իրավունքը: